ՀԱՅԱՍՏԱՆ



ART-A
HASM
1987

827

Միջնադարյան Հայաստանի նշանավոր կրոնական և մշակութային կենտրոններից մեկն է Նորավանքը, որը գտնվում է Եղեգնաձորի շրջանի Ամաղու գյուղից մոտ 3 կմ հյուսիս արևելք, Արփա գետի վտակի խոր կիրճի լանջին:

Հիմնադրվելով հավանաբար դեռևս վաղ միջնադարից գոյություն ունեցող մենաստանի տեղում, Նորավանքը XIII դ. դառնում է Սյունիքի հոգևոր կենտրոնը:

Վանքի հնագույն ս. Կարապետ եկեղեցին (IX դ.) գտնվում է հիմնական հուշարձանախմբի հարավային կողմում: Նրա ավերակները բացվեցին 1982 թ. պեղումների ժամանակ: Եկեղեցին միանավ բազիլիկ է, որը հարավից, ըստ երևույթին, բաց սրահ է ունեցել:

Ս. Կարապետ եկեղեցուն կից է վանքի գլխավոր՝ ս. Ստեփանոս նախավկա եկեղեցին, որը շինել են իշխան Լիպարիտ Օրբելյանը և Սարգիս արքեպիսկոպոսը 1216 — 1221 թթ.: Այն ունի ներքուստ խաչաձև, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն հորինվածք:: Գմբեթը քանդվել է 1840 թ. երկրաշարժից:

Համալիրի հյուսիսային կողմում գտնվում է ս. Գրիգոր եկեղեցին, որը 1275 թ. կառուցել է Տարսայիճ Օրբելյանը իր եղբայր իշխանաց իշխան Սմբատի գերեզմանի վրա: Միանավ բազիլիկ հորինվածքով այս եկեղեցի-տապանատան հեղինակը Սիրանեսն է,



Նորավանքի ընդհանուր տեսքը հյուսիս-արևմուտքից

որը ապրել և ստեղծագործել է XIII դ. Վայոց ձորում և եղել է Օրբելյանների իշխանական տան գլխավոր ճարտարապետը:

Ս. Ստեփանոս նախավկա եկեղեցուն արևմուտքից կից է գավիթը (շինարարությունն ավարտվել է 1261 թ.): Այն ուղղանկյուն մի շենք է, որի ծածկը եզակի է հայկական նույնատիպ կառուցվածքների համար՝ այն իրականացված է գոց թաղերով: Գավիթը ծառայել է որպես Օրբելյանների տոհմական տապանատուն: Այստեղ է թաղված նաև հայ նշանավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանը: Միջնադարյան հայկական արվեստում ինքնատիպությամբ, գեղարվեստական բարձր հատկանիշներով առանձնանում են Նորավանքի գավթի արևմտյան մուտքի և լուսամուտի ճակատակալ քարերի պատկերաքանդակները: Մուտքի ճակատին քանդակված է Աստվածածինը մանուկ Քրիստոսը ծնկներին, շրջապատված բուսական զարդաքանդակներով: Գավթի լուսամուտի ճակատակալ քարի կենտրոնում Հայր Աստծո կիսանդրին է՝ Ադամի գլուխը ձեռքին, աջ եզրում հրեշտակի քանդակը, իսկ ձախ կողմում խաչելության պատկերաքանդակը, որի երկու կողմում Աստվածածինը և Հովհաննես ավետարանիչն են, իսկ ներքևում՝ Աիեղ դատաստանը խորհրդանշող Դանիել մարգարեն: Բարձրաքանդակի հեղինակը, որը իր ժամանակին ուժեղ անհատականությամբ օժտված ամենաշնորհալի ստեղծագործողներից մեկն էր, միանգամայն ազատ է մեկնաբանում և կերտում կանոնիկ պատկերագրական թեմաները: Դրա արտահայտություններից է Հայր Աստծո մարդակերպ պատկերումը, Աստծո շունչը Սուրբ հոգով փոխարինելը, որոնք բացառիկ են պատկերագրության մեջ ընդհանրապես:

Նորավանքի համալիրի արևելյան կողմում առանձին կանգնած, գտնվում է ս. Աստվածածին եռահարկ եկեղեցին (1339 թ.): Եկեղեցու առաջին հարկը կիսագետնափոր է՝ համարվում է, որ այն տապանատուն է եղել և այդտեղ հետագայում թաղվել է կառուցողը՝ Բուրթել Օրբելյանը: Երկրորդ հարկը դրսից և ներսից խաչաձև է, արևելքում կիսաշրջանաձև աբսիդով: Եկեղեցին ավարտվել է սյունազարդ թեթև գմբեթով (այժմ քանդված): Ինքնատիպությամբ աչքի է ընկնում եկեղեցու արևմտյան ճակատի ձևավորումը՝ գետնից



Բուրթելաշեն եկեղեցու արևմտյան ճակատը



Բուրթելաշեն եկեղեցու շքամուտքը



Բուրթելաշեն եկեղեցու արևելյան ճակատը



Խաչքար՝ գավթի արևմտյան կողմում

մինչև 2-րդ հարկը տանող կոնսոլ աստիճանները տաղանդավոր ճարտարապետը (ենթադրվում է, որ այն Մոմիկն է) դարձրել է գեղարվեստական արտահայտչականության հիմնական միջոցներից մեկը: Նրանք եռանկյունի շրջանակ են կազմում շքամուտքի շուրջը, յուրօրինակ դինամիկա հաղորդելով շենքին: Առաջին հարկի մուտքի ճակատակալ քարի բարձրաքանդակում պատկերված են գահավորակի վրա նստած Աստվածամայրը՝ մանուկ Հիսուսը գոգին և երկու կողմում կանգնած Գաբրիել և Միքայել հրեշտակապետերը: Վերին հարկի մուտքին քանդակված են Քրիստոսի կիսանդրին և նրա երկու կողքին՝ ողջ հասակով Պետրոս և Պողոս առաքյալները: Քանդակազարդ ֆոնի բացակայության և ցցուն ծավալների շնորհիվ այս բարձրաքանդակը շենքի ճարտարապետությունից անկախ և ինքնուրույն ստեղծագործության արժեք ունի: 1982 թ. պեղումներից եկեղեցու մոտ գտնվեց շենքի վերին մասից ընկած Օրբելյան իշխանական տան զինանշանը՝ մագիլներում եղնիկ բռնած արծվի բարձրաքանդակը:

Նորավանքը XVII դ. շրջապատվել է պարսպով, որին ներսից կից կառուցվել են վանքի բնակելի և տնտեսական շենքերը: Պահպանված միակ դարպասը հյուսիսային կողմում է: Պարսպից դուրս, դեպի արևելք գտնվում են երկու թաղածածկ մատուռներ (XIV դ.):

Նորավանքի բակում և գավթի մեջ կան XIII — XIV դդ. բազմաթիվ խաչքարեր, որոնք իրենց վիմագրության և քանդակների շնորհիվ մեծ արժեք ունեն թե՛ Սյունիքի պատմության և թե՛ միջնադարյան հայ արվեստի պատմության համար: Նրանց շարքում հատկապես ուշագրավ են Մոմիկի կերտածները:

Նորավանքն իր կառույցների ու քանդակների բազմազանությամբ, բացառիկ առանձնահատկություններով ու գեղարվեստական բարձր արժանիքներով համարվում է XIV դ. Հայաստանի լավագույն ճարտարապետական հուշարձանը:



ԳՄԴ 85.113(2Հ)1
Հ 368

ՄՈՒՐԱԴ ՄԱՐԳԱՐԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՆՈՐԱՎԱՆՔ
Երևան «Հայաստան» 1987

МУРАД МАРГАРОВИЧ АСРАТЯН
НОРАВАНК
(На армянском языке)
Ереван «Айастан» 1987 г.

Խմբագիր՝ **Ա. Ս. Ոսկանյան**
Նկարիչ՝ **Է. Խ. Խաչատրյան**
Տեխն. խմբագիր՝ **Յ. Սարգսյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Ս. Վ. Խաչատրյան**

Հ $\frac{4902020000}{701(01)86}$ պատվեր

Խաչքար (քանդակագործ՝ Մոմիկ)

© ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՉԿ

ՎՖ 01150: Տպաքանակ՝ 10000, պատվեր՝ 5180: Գինը՝ 15 կոպ.: Ֆորմատ՝ 70×108 1/32: 0,52 պայմ. տպ. մամ., 0,5 հրատ. մամ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Իսահակյան 28
Издательство «Айастан» Ереван — 9, ул. Исаакяна 28

ԳՈՒՆԱՎՈՐ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ
Երևան — 82, Ադմիրալ Իսակովի պող. 48:
ТИПОГРАФИЯ ЦВЕТНОЙ ПЕЧАТИ
Ереван — 82, пр. Адмирала Исакова, 48.